ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Գործառույթներ.

Բաժնի գլխավոր խորհրդատուն՝

1. իրականացնում է Ծառայության շահերի, կատարողական վարույթով հարկադիր կատարողի շահերի ներկայացումը,
2. նախապատրաստում է հայցադիմումներ, հայցադիմումի պատասխաններ, վերաքննիչ, վճռաբեկ բողոքներ և նույն դատարաններում ապահովում է Ծառայության շահերի ներկայացումը,
3. ներկայացնում է դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում կամ հարկադիր կատարման ոլորտին վերաբերվող իրավական ակտերում փոփոխություններ, լրացումներ կատարելու վերաբերյալ համապատասխան առաջարկություններ,
4. իրականացնում է այլ պետական մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավական եզրակացությունների նախագծերի նախապատրաստումը,
5. իրականացնում է կատարողական վարույթների շրջանակներում անձանց գործողություններին քրեաիրավական գնահատական տալու առնչությամբ քրեական հետապնդման մարմիններին ուղղված հաղորդումների և նյութերի նախագծերի նախապատրաստումը,
6. անհրաժեշտության դեպքում նախապատրաստում է կատարողական թերթի պարզաբանման վերաբերյալ դիմումներ,
7. նախապատրաստում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական մարմինների կողմից Ծառայությանն ուղղված գրություններին պատասխան-գրությունների, ինչպես նաև Ծառայության անունից այլ գրությունների նախագծեր,
8. տրամադրում է հարկադիր կատարման ոլորտին վերաբերվող իրավաբանական խորհրդատվություն Ծառայության աշխատակիցներին:

2. Պաշտոնին ներկայացվող պահանջները.

Հարկադիր կատարման ծառայության իրավաբանական բաժնի գլխավոր խորհրդատուի պաշտոնում կարող է նշանակվել այն անձը, որն զբաղեցրել է գլխավոր հարկադիր կատարողի կամ տեղակալի կամ հարկադիր կատարման ծառայության գլխավոր խմբի պաշտոն կամ առնվազն երկու տարի՝ առաջատար խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ

կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

Պաշտոնի կարող է նշանակվել իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող անձը: